Մրցույթի հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «Արևաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

1. Հասարակագիտության -5 դասաժամ
2. Բնագիտության – 4 դասաժամ
3. Ֆիզիկայի- 11 դասաժամ
4. Մաթեմատիկայի- 16 դասաժամ
5. Ֆիզկուլտուրայի- 9 դասաժամ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1)
- 1 լուսանկար (3Х4 չափի)
- անձը հաստատող փաստաթուղթ
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ. փետրվարի 8-ից մինչև 2023թ. փետրվարի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. փետրվարի 23-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատի միջնակարգ դպրոցում, հասցեն՝Փարաքար համայնք, գյուղ Արևաշատ, Երևանյան խճուղի 26:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-430-610 հեռախոսահամարով:

<<Արևաշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ- ի տնօրինություն